

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/5

1 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արա Փիրոյանի 05.06.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ էջմիածնի ՏՀՏ 28.04.2014 թ-ի թիվ 1108982 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Արա Փիրոյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Արա Փիրոյանը գտնում է, որ ակտը կազմվել է օրենքի խախտմամբ, այն իրավաչափ չէ, ուստի սույնով ներկայացնում է ակտի վիճարկման գանգատը հետևյալ հիմքերով և հիմնավորումներով:

28.04.2014 թ-ի թիվ 1108982 ակտով էջմիածնի ՏՀՏ-ի աշխատակիցներ Ս.Վարդանյանը և Կ.Կարապետյանն արձանագրել են, որ 09.04.2014 թ-ին ժամը 13:09-ին այցելել են ք.էջմիածին, Մաշտոց 83ա հասցեում գտնվող ծառայությունների մատուցման կետ և պատվիրել են կատարել 3000 դրամի ծառայություն, որի դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Արձանագրել են նաև, որ խախտվել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «գ» ենթակետի պահանջները: Արդյունքում նշանակվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը 300.000 դրամի չափով:

Ա/Ձ Արա Փիրոյանը գտնում է նաև, որ սխալ է կիրառվել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ այն նշանակվել է իրավանորմով նախատեսված խախտման բացակայության պայմաններում: Այսինքն, ակտում արձանագրված փաստն այն մասին, որ 09.04.2014 թ-ին ժամը 13:09-ին ծառայության կետում մատուցվել է 3000 դրամի ծառայություն, որն իբրև հաստատվել է ՀԴՄ-ի կտրոնի և Z հաշվետվությամբ, իրականությանը չի համապատասխանում և որևէ ապացույցով չի հաստատվում:

Ա/Ձ Արա Փիրոյանը 09.04.2014 թ-ին ժամը 13:10-ին ներս է մտել ծառայության կետ, որտեղ հանդիպել է էջմիածնի ՏՀՏ-ի աշխատակիցներին: Վերջիններս ներկայացրել են թիվ 1108982 հանձնարարականը, որի համաձայն ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասությունների սահմաններում ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությանը պարզելու նպատակով պետք է իրականացնել հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման ճշտության ստուգում: Ա/Ձ Արա Փիրոյանը մի պահ դուրս է եկել և ՏՀՏ-ի աշխատակիցներն առանց իր ներկայության կազմել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման վերաբերյալ արձանագրություն: Այնուհետև ստուգող անձինք Ա/Ձ Արա Փիրոյանին առաջարկել են ստորագրել ակտի նախագիծը, սակայն վերջինիս կողմից այն չի ստորագրվել, քանի որ արձանագրությունը կազմվել է ոչ իրավաչափ ձևով՝ նման ծառայություն չի մատուցվել, ոչ ոք իրեն գումար չի տվել: Այսինքն, չկա ապացույց այն մասին, որ որևէ քաղաքացու կամ ՏՀՏ-ի աշխատակցի մատուցվել է ծառայություն և դրա դիմաց գումար է վճարվել:

09.04.2014 թ-ին ժամը 13:10-ին ծառայությունների մատուցման կետում ՏՀՏ-ի աշխատակիցներն առանց ծառայողական վկայականները ներկայացնելու պահանջել են տրամադրել ՀԴՄ-Ն Z հաշվետվություն հանելու համար: Երբ Ա/Ձ Արա Փիրոյանը

հարցրել է, թե ինչի համար են պահանջում ներկայացնել ՀԴՄ-ն, հնչել է պատասխան, որ մատուցվել է 3000 դրամի ծառայություն, որը պետք է ֆիքսվեր ՀԴՄ-ի միջոցով: Առանց իր կարծիքը հարցնելու կամ բացատրությունները լսելու ՀԴՄ-ից հանվել է Z հաշվետվությունը:

Պետք է նշել, որ նույն հասցեում ծառայություն է մատուցում նաև Ա/Ձ Սեդա Սարգսյանը: Վերջինիս մոտ նույն օրը ևս կատարվել է ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգում և մատուցված ծառայության դիմաց ՀԴՄ-ի կտրոն չտրամադրելու համար նրա նկատմամբ կազմվել է ստուգման ակտ, որը Սեդա Սարգսյանի կողմից ընդունվել է և ստորագրվել: Այս ամենը նշվում է նրա համար, որպեսզի հանձնաժողովը համոզվի Ա/Ձ Արա Փիրոյանի կողմից վկայակոչված փաստական հանգամանքների իրողության մեջ:

Ա/Ձ Արա Փիրոյանը չի ընդունում ՏՏՏ-ի աշխատակիցների կողմից կազմված թիվ 1108982 ակտը և դրանով առաջադրված 300.000 դրամ գումարի տուգանքի պահանջը, քանի որ իրականում նման խախտում տեղի չի ունեցել:

Ստուգողների կողմից խախտվել են «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի 1-ին կետի (գ) և (ե) ենթակետի պահանջները: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն անվավեր է առոչինչ հանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արա Փիրոյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ էջմիածնի ՏՏՏ-ի թիվ 1108982 ստուգման ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.03.2014 թ-ի թիվ 1108982 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արա Փիրոյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 28.04.2014 թ-ին կազմվել է թիվ 1108982 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Կորյուն Կարապետյանին 09.04.2014 թ-ին ժամը 13:09-ին ք.էջմիածին, Մաշտոց 83ա

հասցեում գործող Ա/Ձ Արա Փիրոյանի կողմից մատուցվեց ծառայություն 3000 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Արա Փիրոյանը վճարված գումարը՝ 3000 դրամը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 13:12-ին դուրս բերվեց «Z» հաշվետվություն Օ դրամ ընդհանուր գումարով: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 3000 դրամը, ժամը 13:13-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և «Z» հաշվետվությունը՝ 3000 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «գ» ենթակետի պահանջները: Արդյունքում

տնտեսավարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 300.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում հարկային տեսուչ Կորյուն Կարապետյանը նշեց, որ իր կողմից 09.04.2014 թ-ին ժամը 13:09-ին ք.Էջմիածին, Մաշտոց 83ա հասցեում գործող ծառայությունների մատուցման կետում Ա/Ձ Արա Փիրոյանին պատվիրվել է մատուցել ծառայություն, որի դիմաց կանխիկ վճարվել է 3000 դրամ: Սակայն, գանձված գումարը Ա/Ձ Արա Փիրոյանը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Այնուհետև Ա/Ձ Արա Փիրոյանին ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը, ինչպես նաև իրականացվել են ստուգողական համապատասխան գործողություններ, որոնց արդյունքում հիմնավորվել է Ա/Ձ Արա Փիրոյանի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են մատուցված ծառայության դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 13:12-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Հանձնաժողովի համոզմամբ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են Ա/Ձ Արա Փիրոյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «գ» ենթակետի պահանջները խախտված լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ